16 մայիսի 2019 թվականի N 577 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1841-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 1841-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման 1-ին կետում «115.22» թիվը փոխարինել «116.28» թվով, իսկ «26.11» թիվը՝ «27.17» թվով.

2) որոշման 2-րդ կետի՝

ա. «ա» ենթակետում «115.22» թիվը փոխարինել «116.28» թվով,

բ. «բ» ենթակետում «70.73» թիվը փոխարինել «69.67» թվով.

3) որոշման N 2 հավելվածի՝

ա. «Բնակավայրերի» տողում «26.11» թիվը փոխարինել «27.17» թվով, իսկ «1.71» թիվը՝ «0.65» թվով,

բ. «Ընդամենը» տողում «115.22» թիվը փոխարինել «116.28» թվով, իսկ «70.73» թիվը՝ «69.67» թվով.

4) որոշման N 4 հավելվածում՝

ա. II սեկցիայի «2» պարբերությունից առաջ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«

1	1.06								հասարակական

»,

բ. II սեկցիայի «Ընդամենը» պարբերությունում «26.11» թիվը փոխարինել «27.17» թվով.

5) որոշման N 5 հավելվածի II սեկցիայի «3» պարբերությունը հանել, իսկ «Ընդամենը» պարբերությունում «1.71» թիվը փոխարինել «0.65» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ